

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

08.06.2012թ.

գ. Բալահովիտ

Ի կատարումը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունվարի 30-ի N 11-Ա հրամանով հաստատված վարչական հսկողություն իրականացնելու 2012 թվականի աշխատանքային ծրագրի, ՀՀ Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 22-ի թիվ 10-Ա կարգադրության և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի հունիսի 04-ի N 101-Ա հրամանի՝ ս. թ. հունիսի 05-ից 07-ը ներառյալ Կոտայքի մարզի Բալահովիտի գյուղապետարանում իրականացվեց վարչական հսկողություն: Վարչական հսկողությունը իրականացվել է ՀՀ փոխվարչապետի 2012 թվականի հունվարի 30-ի N 02-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության իրականացման և կադրային գործի վարման, մեթոդական ուղեցույցի համաձայն: Ուսումնասիրությունները իրականացվել են հետևյալ կազմով՝ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյան (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռ. Թումոյան, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Կ. Հունանյան, նույն բաժնի առաջատար մասնագետ Ս. Բաղդասարյան, իրավաբանական բաժնի պետ Ա. Հարությունյան, հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Ե. Ավետիսյան, քաղաքաշինության վարչության՝ ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ Ա. Վիրաբյան:

Աշխատանքներին մասնակցել են Բալահովիտ համայնքի ղեկավար Կ. Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ա. Պետրոսյանը:

Վարչական հսկողությունը ընդգրկել է 2009 թվականի հունիսից մինչև 2012թ. հունիսը ընկած ժամանակահատվածը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Իրավական հսկողության իրականացում՝ համայնքի ավագանու ներքոհիշյալ լիազորությունների նկատմամբ

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգի ընդունում.

- Բալահովիտ համայնքի ավագանին ընտրվել է 2008թ. հոկտեմբերի 12-ին և բաղկացած է 11 անդամներից /օրենքով սահմանված թիվը՝ 11/ իր լիազորությունները ստանձնել է 2008թ.-ի նոյեմբերի 11-ին:

2) համայնքի զարգացման ծրագրի հաստատում.

- Համայնքի ավագանին համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատել է 01.12.2008թ. թիվ 1/4 որոշմամբ, օրենքով սահմանված ժամկետում: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք հոդված 53, մաս առաջին:/

3) համայնքի բյուջեի, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունների եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատում.

- Համայնքի բյուջեի նախագիծը ավագանու հաստատմանը ներկայացվել է <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում:

Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները և եռամսյակային հաղորդումները ավագանու քննարկանք և հաստատմանը ներկայացվել են <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում:

4) համայնքի բյուջեի կատարման վերահսկում և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործում.

* Համայնքում վարչական հսկողություն իրականացման ժամանակահատվածում համայնքը վարկեր և այլ միջոցներ չի ներգրավվել:

5) կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ.

- Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգի մասին որոշում չի ընդունվել, /համայնքի ղեկավարը այդպիսի որոշման նախագիծ չի ներկայացրել/, չի

կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջը:

6) համայնքի ավագանու որոշմամբ եւ սահմանած պայմաններով համայնքի սեփականություն համարվող գույքի օտարում կամ օգտագործման տրամադրում.

* 11.07.2009թ-ի համայնքի ավագանու N 39 որոշմամբ Բալահովիտ համայնքի N 61 հանրակացարանի թվով 6 բնակարան օտարվել է, որից 3 բնակարանը ուղղակի վաճառք եղանակով:

2009թ-ի նոյեմբերի 13-ին համայնքի ավագանու N 78.79 որոշումներով օտարվել է 2 բնակարան, իսկ 2011թ-ին համայնքի ավագանու N 38-42 որոշումներով օտարվել է 5 բնակարան:

-Ստուգման ժամանակահատվածում Բալահովիտ գյուղական համայնքի ավագանու կողմից կայացվել է ավագանու 29 որոշում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային եղանակով և ուղղակի վաճառքի ձևով: Ավագանին իր որոշումներում օրենքի պահանջներին համապատասխան հավանություն է տվել համայնքի ղեկավարի առաջարկություններին հողամասերը օտարելու վերաբերյալ, հաստատել է աճուրդ-վաճառքի մեկնարկային գները:

7) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացում.

+ Համայնքի ղեկավարի լիազորություններ նկատմամբ վերահսկողություն է իրականացվում բյուջեի ընթացքի մասին հաղորդումներ միջոցով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել է թվով 13 հաղորդում, որը ավագանու կողմից ընդունվել է ի գիտություն:

8) համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկում.

+ Համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկում չի արձանագրվել:

9) համայնքի ղեկավարի վարձատրության չափի որոշում.

- Ավագանու՝ 14.12.2009թ. N 85, 20.12.2010թ. N 54, 13.12.2011թ. N 51 որոշումներով, ամեն տարի, համայնքի ղեկավարի վարձատրության չափ է սահմանվել 160000 դրամ, որը համապատասխանում է օրենքով սահմանված չափին /համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 3448 մարդ, ՏԻՄ հ. 27/: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդված 1-ին մաս 8-րդ կետ/:

10) համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային եւ ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին օրենքով սահմանված կարգով որոշման կայացում .

-Համայնքում՝ համայնքային բյուջետային հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ չկան:

11) համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին իր որոշմամբ համաձայնություն տալը.

--Համայնքում՝ համայնքային բյուջետային հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ չկան:

12) առևտրի, հասարակական սննդի եւ սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնների՝ օրենքով սահմանված կարգով հաստատում.

-Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները հաստատվել են ավագանու 25.04.2006թ. թիվ 1/2-Ն որոշմամբ:

13) տեղական հարկերի, տուրքերի եւ վճարների տեսակների ու դրույքաչափերի օրենքով սահմանված դեպքերում սահմանում.

- Տեղական տուրքերի տեսակները ավագանու կողմից հաստատվել է օրենքով նախատեսված ժամկետներում համայնքի բյուջեն հաստատվելուց առաջ և դրույքաչափերի փոփոխություն ավագանու կողմից տարվա ընթացքում չի կատարվել: Իսկ ցանկը հաստատվել է օրենքով նախատեսված տեսակներով: Համայնքի ավագանու կողմից տեղական վճարներից սահմանվել է 5 տեղական վճար և տարվա ընթացքում ավելացվել է 1 տեղական վճար:

14) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանում.

*Ըստ հաստատված բյուջեի մեր կողմից կատարված դիտարկումների արդյունքների համայնքի բյուջեն համալրվում է տեղական հարկերից միայն հողի հարկից և գույքահարկից: Տեղական տուրքերի տեսակները ավագանու կողմից հաստատվել է օրենքով նախատեսված ժամկետներում համայնքի բյուջեն հաստատվելուց առաջ և դրույքաչափերի փոփոխություն ավագանու կողմից տարվա ընթացքում չի կատարվել: Իսկ ցանկը հաստատվել է օրենքով նախատեսված տեսակներով: Համայնքի ավագանու կողմից տեղական վճարներից սահմանվել է 5 տեղական վճար և տարվա ընթացքում ավելացվել է 1 տեղական վճար:

15) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարելու մասին որոշման կայացում, դրանց վարձավճարների եւ օտարման գների չափերի եւ պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների հաստատում.

*** Համայնքի սեփականություն համարվող հողամասերի օտարման վերաբերյալ /վարձակալական մրցույթներ չեն կայացվել/ համայնքի ղեկավարի կողմից ավագանուն ներկայացվել է 29 առաջարկություն, որը հաստատվել է համայնքի ավագանու որոշմամբ, ինչպես նաև հաստատվել է աճուրդով օտարվող հողերի մեկնարկային գները:

16) համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային եւ այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման եւ վերանվանման վերաբերյալ որոշման կայացում.

-Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել, այդպիսի որոշման նախագծեր չեն ներկայացվել:

17) գյուղապետարանի աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի հաստատում.

Համայնքային ծառայության պաշտոնների մասով գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի եւ (կամ) հաստիքացուցակի հաստատում, ինչպես նաև փոփոխելու եւ (կամ) լրացնելու հարցում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն դիմելու մասին որոշման կայացում:

-Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու 26.03.2010թ. N 14, 20.12.2010թ. N 55/փոփոխ./, 13.12.2011թ. N 52, 20.03.2012թ. N 10 /փոփոխ./ որոշումներով:

- ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանով հաստատվել է Բալախովիտի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը: Անվանացանկի /հավելված N 11/ համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները հինգն են, անվանացանկում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

18) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրության հաստատում.

**ՀՀ Կոտայքի մարզի Բալախովիտ համայնքում բացակայում է քաղաքաշինական կանոնադրությունը:

19) համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատում.

* Գույքագրման փաստաթղթերի նկատմամբ իրականացված հսկողության արդյունքում պարզվեց, որ գույքի նկատմամբ չի տարվել ամորտիզացիոն մասհանման հաշվարկ, ինչպես նաև գույքագրվել են միայն հիմնական միջոցները, ինչը հակասում է <Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման կարգը հաստատելու մասին> ՀՀ ֆինանսների նախարարի 2000թ-ի N 102-Ն հրամանին:

2. Իրավական և (կամ) մասնագիտական հսկողություն իրականացվում է համայնքի ղեկավարի՝ ներքոհիշյալ բնագավառներում, իրականացրած լիազորությունների նկարմամբ

2.1 Ֆինանսների բնագավառ

1. Համայնքի բյուջեի նախագծի, դրանում առաջարկվող փոփոխությունների կազմում համայնքի ավագանու հաստատման ներկայացում, բյուջեի կատարման ապահովում և բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվության ներկայացում համայնքի ավագանուն.

- Համայնքի բյուջեի նախագիծը ավագանու հաստատմանը ներկայացվել է << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում, որոշ հաշվետվությունների ցուցանիշներ սխալ են և ոչ իրատեսական, այսինքն ՏԳԲ-ի ցուցանիշների հետ չի համապատասխանում: 2009-2011թթ-ը համայնքի ավագանու կողմից կատարվել է համայնքի բյուջեի թվով 24 փոփոխություններ:

Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները և եռամսյակային հաղորդումները ավագանու քննարկանք և հաստատմանը ներկայացվել են <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում, սակայն բացառությամբ 2009-ի բյուջեի կատարման մասին հաշվետվություն համայնքի ավագանուն ներկայացվել է առանց աուդիտորական եզրակացության: Հարկ է նշել, որ համայնքի աշխատակազմում գործում է ներքին հսկողության համակարգ:

2. *Տեղական հարկերի, տուրքերի և վճարների օրենքով սահմանված փեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի ներկայացում ավագանու հաստատմանը:*

Ըստ հաստատված բյուջեի մեր կողմից կատարված դիտարկումների արդյունքների համայնքի բյուջեն համալրվում է տեղական հարկերից միայն հողի հարկից և գույքահարկից: Տեղական տուրքերի տեսակները ավագանու կողմից հաստատվել է օրենքով նախատեսված ժամկետներում համայնքի բյուջեն հաստատվելուց առաջ և դրույքաչափերի փոփոխություն ավագանու կողմից տարվա ընթացքում չի կատարվել: Իսկ ցանկը հաստատվել է օրենքով նախատեսված տեսակներով: Համայնքի ավագանու կողմից տեղական վճարներից սահմանվել է 5 տեղական վճար և տարվա ընթացքում ավելացվել է 1 տեղական վճար:

3. *Տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գրավող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման ու վերահսկման օրենքով սահմանված կարգով կազմակերպում:*

2009թ-ի համայնքի բյուջեի 2009թ-ի տարեկան կատարողականի վերլուծության արդյունքում պարզվեց, որ տեղական հարկերից ցածր կատարողական է ապահովվել հողի հարկի գծով ինչը թերակատարվել է 108.7 հազար դրամ կամ նախատեսված 3098.6 հազար դրամի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 2989.9 հազար դրամ/ապառքը կազմել է 128.9 հազար դրամ/: 2009թ-ին գույքահարկի գծով կատարողականը կազմել է նախատեսված ծավալի 131.2%, իսկ ապառքը կազմել է 615.4 հազար դրամ:

4. *Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառում:*

Վարչական հսկողության իրականացման օրվա դրությամբ համայնքի բյուջեի նկատմամբ հողի հարկի և գույքահարկի գծով հարկային պարտավորությունները կազմել են համապատասխանաբար 524.2 հազար դրամ և 1045.1 հազար դրամ: Գույքահարկի և հողի հարկի ապառքների գծով համայնքի բնակիչներին ներկայացվել են ծանուցագրեր, ինչպես նաև կազմվել է ժամանակացույց: Հարկ է նշել, որ տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել, այն դեպքում, երբ համայնքի ավագանու կողմից հաստատված տեղական վճարների՝ աղբահանություն կազմակերպելու, ինչպես նաև համայնքային սեփականության իրավունքով պատկանող հանրակացարանի սենյակների օգտագործման տրամադրելու վարձավճար համար սահմանված վճարների ուղղությամբ ապառքներն են՝ աղբահանության վճարի գծով՝ 3106.1, իսկ բնակարանային վարձավճարի գծով՝ 718.8 հազար դրամ:

Աղբահանության վճարների, ինչպես նաև համայնքային սեփականության իրավունքով պատկանող հանրակացարանի սենյակների օգտագործման տրամադրելու վերաբերյալ համայնքի բնակիչների հետ պայմանագրեր չեն կնքվել, ինչը վարչական հսկողության ընթացքում կարգավորվել է, համայնքային սեփականության իրավունքով պատկանող հանրակացարանի սենյակների օգտագործման տրամադրելու վարձավճարների ապառքների գծով բնակիչներին ներկայացվել են ծանուցագրեր, որտեղ նշված է նախորդ տարիների ապառքը և տվյալ տարվա հաշվարկը:

5. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծի ներկայացում ավագանու հաստատմանը:

Ըստ հաստատված բյուջեի մեր կողմից կատարված դիտարկումների արդյունքների համայնքի բյուջեն համալրվում է տեղական հարկերից միայն հողի հարկից և գույքահարկից: Տեղական տուրքերի տեսակները ավագանու կողմից հաստատվել է օրենքով նախատեսված ժամկետներում համայնքի բյուջեն հաստատվելուց առաջ և դրույքաչափերի փոփոխություն ավագանու կողմից տարվա ընթացքում չի կատարվել: Իսկ ցանկը հաստատվել է օրենքով նախատեսված տեսակներով: Համայնքի ավագանու կողմից տեղական վճարներից սահմանվել է 5 տեղական վճար և տարվա ընթացքում ավելացվել է 1 տեղական վճար:

2.2 Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

1) Կառավարության սահմանած կարգով քաղաքային եւ գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմում:

ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի հողերի օգտագործման և գոտիատրման սխեման հաստատվել է ՀՀ Կառավարության 2009թ.-ի սեպտեմբերի 3-ի 1038-Ն որոշմամբ

2) Համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարում, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմում և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում.

Քաղաքաշինական կադաստր համայնքը չի վարում, բացակայում է քաղաքաշինական կանոնադրությունը:

3) Սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկում, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցում.

Համայնքի ղեկավարի կողմից ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը և նախագծերի քննարկումը բացակայում է, խախտելով ՀՀ կառավարության 28.10.1998թ. թիվ 660 որոշման պահանջները, սակայն իրազեկումը կատարվում է գյուղապետարանի շենում տեղադրված վահանակների միջոցով:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին համաձայնեցվել է 5; 2010թ-ին 12 և 2011թ-ին 11 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր, որոնք համապատասխանում են գործող կարգին:

4) Շինարարության (քանդման) թույլտվության սահմանված կարգով տրամադրում, շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար օրենքով սահմանված կարգով միջոցառումների ձեռնարկում.

Համայնքի ղեկավարի կողմից 2010թ-ին տրվել է 2 շինությունների քանդման թույլտվություններ և տրվել է 2009թ-ին 5; 2010թ-ին 12 և 2011թ-ին 11 շինարարության թույլտվություններ որոնց տրման կարգը համապատասխանում է ՀՀ կառավարության 02.02.2002թ N91 որոշման պահանջներին:

5) Ավարտված շինարարության շահագործման փաստագրման սահմանված կարգով ձեռակերպում.

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 2, 2010թ-ին 3, 2011թ-ին 9 և 2012թ-ին 1 շինարարության ավարտը փաստագրող ակտեր, որոնցում շինարարության վարման մատյանը առկա է, իսկ ծածկած աշխատանքների ակտերը բացակայում են:

6) Ինքնակամ շինարարության կանխարգելում ու կասեցում եւ օրենքով սահմանված կարգով դրանց հետեւանքների վերացման ապահովում.

Համայնքում ընթացող անօրինական շինարարությունների չեն հայտնաբերվել:

7) Շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ սահմանված կարգով վերահսկողության իրականացում.

Շենքերի և շինությունների նպատակային օգտագործման փոփոխություններ չեն եղել:

8) Համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառման իրականացում եւ բաշխում, սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի կազմում և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում.

Իրականացվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի և շինությունների հաշվառումը և բաշխումը կազմվել է համապատասխան փաստաթղթեր և տրվել է ավագանու հաստատմանը, որոնք հաստատվել են 2011թ-ի դեկտեմբերի 13-ի թիվ 54 որոշմամբ:

9) Համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության տրամադրում.

13.12.2011թ-ին Բալահովիտ համայնքի ավագանու N50-Ն որոշմամբ հաստատվել է գովազդի տեղադրման թույլտվություն տրամադրելու կարգը:

10) Համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրնուղի, կոյուղու, ռոտգման ու ջեռուցման ցանցերի եւ այլ կառուցվածքների շահագործման կազմակերպում եւ կառավարում.

Ներհամայնքային հաղորդակցության ուղիների շահագործումն իրականացնում են մատակարարող կազմակերպությունները որոնք համայնքային ենթակայության չեն:

11) Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերի համայնքի ավագանու հաստատմանն ներկայացում:

Համայնքի կողմից բազմաբնակարան բնակելի շենքերի պահպանում չի իրականացվում:

2.3 Հողօգտագործման բնագավառ

1./ համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կառավարության սահմանված կարգով կազմում.

Համայնքի ղեկավարի կողմից 2007թ. պատվիրվել է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման, որը հաստատվել է ՀՀ կառավարության 03.09.2009թ. թիվ 1038-Ն որոշմամբ: Համաձայն սույն որոշման 14,7 հա բնակավայրի նշանակության այլ հողերից փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման հողերի կատեգորիա:

2/ համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով, համայնքի սեփականություն համարվող հողամասերի սահմանված կարգով օտարում, կամ օգտագործման տրամադրում:

Ստուգման ժամանակահատվածում համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով համայնքի ղեկավարի կողմից կայացվել է համայնքային սեփականության հողամասերի 24 աճուրդ-վաճառք և 8 ուղղակի վաճառք, հողամասերի վարձակալական մրցույթներ տեղի չեն ունեցել:

3. Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողական իրականացում:

- Համայնքի վարչական տարածքում հողերի ոչ նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների խախտման դեպքեր չկան:

4. Այօրինի հողօգտագործողների կանխում, կանխարգելում

Ստուգման ժամանակահատվածում համայնքում այօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

5. Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման սահմանված կարգով իրականացնում է համայնքի հողային հաշվեկշռի կազմում:

- Սահմանված կարգով վարվում է համայնքի հողերի ընթացիկ հաշվառում և հողային հաշվեկշռի կազմումը:

2.4 Տրանսպորտի բնագավառ.

1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթեւեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման եւ շահագործման կազմակերպում.

- Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթեւեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման աշխատանքներից՝ կատարվել են միայն համայնքային ենթակայության ճանապարհների նորոգման և բարեկարգման աշխատանքներ:

2) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների եւ կազմակերպությունների գործունեության կազմակերպում եւ կառավարում.

-Համայնքում՝ համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ և կազմակերպություններ չեն գործում:

3) Իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման ու հանման հաստատում եւ թույլատրում:

-Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը հաստատելու և թույլատրելու մասին համայնքի ղեկավարը որոշումներ չի ընդունել: Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի ղեկավարը հաստատում և թույլատրում է համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը: Երթևեկության այն նշանները, որոնց տեղադրումը համաձայնեցված չէ համայնքի ղեկավարի հետ, իրավական ուժ չունեն:

2.5 Առևտրի և ծառայությունների բնագավառ.

1) Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում առևտրի, հանրային սննդի եւ կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացում.

-Ստուգվող ժամանակահատվածում, համայնքի տարածքում գործել են 18-19 առևտրի և 4 հասարակական սննդի և 1 կենցաղային ծառայության օբյեկտներ:

-Համաձայն մարզպետարան ներկայացված հաշվետվությունների առևտրի օբյեկտների հսկողություններ ստուգվող ժամանակաշրջանում իրականացվել են, սակայն ուսումնասիրությունից պարզվում է, որ համայնքի ղեկավարի կողմից նման հանձնարարագրեր չեն տրվել, աշխատակազմում հսկողության արդյունքներով կազմված արձանագրություններ կամ տեղեկանքներ առկա չեն: Իսախտվել են <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17-րդ և 171-րդ հոդվածների /մաս 10/ պահանջները: Համայնքի ղեկավարը այս բնագավառում չի իրականացրել իր պարտադիր լիազորությունները:

2) Ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվության տրամադրում:

- Ստուգվող ժամանակավատվածում տրամադրվել են 761.9 հազար դրամի ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի և իրացման թույլտվություններ: Ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությունները տրամադրվել են <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջի խախտմամբ՝ <<Տեղական տուրք և /կամ/ վճար գանձող մարմինների պաշտոնատար անձինք ... տեղական տուրք կամ վճար գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը ... >>:

3) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության տրամադրում.

- Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություններ չեն տրամադրվել:

4) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվության տրամադրում:

-Համայնքի տարածքում ժամը 24.00-ից հետո աշխատող զվարճանքի 1 օբյեկտի, սահմանված կարգով տրվել են թույլտվություն՝ 2010 և 2011 թթ, յուրաքանչյուր տարվա համար 100 հազար ական դրամ:

5) համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի թույլտվության տրամադրում.

- Թանկարժեք մետաղների առուվաճառքի թույլտվության տրամադրումներ ստուգվող ժամանակահատվածում չեն կատարվել:

6) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության տրամադրում:

- Համայնքի տարածքում գործում է հեղուկ վառելիքի լցակայան, վաճառքի թույլտվության տրամադրումը կատարվել է սահմանված կարգին համապատասխան՝ 2010 և 2011 թթ, յուրաքանչյուր տարվա համար 170 հազար ական դրամ:

Այլ քննազավատներ

1) Ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստերի հրավիրում եւ վարում.

- 2009թ. /ստուգվող ժամանակահատվածում/ գումարվել է ավագանու 11 նիստ, որից 5-ը՝ արտահերթ, 2010թ. 19 նիստ, որից 9-ը՝ արտահերթ /ընդունվել է 63 որոշում/, 2011թ.՝ 11 նիստ, որից 3-ը՝ արտահերթ /ընդունվել է 60 որոշում/, 2012թ./մինչև ստուգումը/ 4 նիստ, որից 2-ը՝ արտահերթ /ընդունվել է 13 որոշում/:

-Հարկ է նշել, որ ավագանու որոշումների նախագծերը կազմվել են բացթողումներով, պարզ չեն նախագծերի ձևավորման, մշակման և աշխատակազմի քարտուղարին ներկայացման ամսաթվերը: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդված/:

- Ավագանու նիստերին ներկայացած և քվեարկությանը մասնակցած ավագանու անդամների գրանցումներ կատարվել են, սակայն թերություններով, նշված չէ ավագանու անդամի բացակայելու պատճառը:

- Ավագանու նիստերի արձանագրումները կատարվում են մատյաններում: ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույցը գյուղապետարանին տրամադրելուց հետո՝ արձանագրությունները չեն համապատասխանեցվել մեթոդական ուղեցույցի 7-րդ կետի պահանջներին: Նշված մեթոդական ուղեցույցը մարզպետի 01.10.2011թ. N 01/15.1/3987-11 գրությամբ ուղարկվել է գյուղապետարան:

- Ավագանու որոշումները ներկայացվում են անհատական ձևաթղթերի վրա, որոնք հիմնականում համապատասխանում են օրենսդրական տեխնիկայի կանոններին՝ <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-45-րդ հոդվածների պահանջներին:

- Ստուգվող ժամանակահատվածի, ավագանու նիստերի որոշումները մարզպետարան են առաքվել հիմնականում օրենքով սահմանված ժամկետում:

- Ավագանու նիստերի մասին և օրակարգերի հրապարակումները իրականացվում են 5 տեղ, 1-ը՝ համայնքապետարանում: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք, 12-րդ հոդված: Համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 3448 մարդ:/

- Ավագանու որոշումների հաշվառման մատյաններ վարվում են 2009 թվականից, 2009թ. հաշվառվել է 98 որոշում, 2010թ.՝ 63 որոշում, 2011թ.՝ 60 որոշում, 2012թ. /մինչև ստուգումը/ 13 որոշում: /ՀՀ կառավարության 11 հուլիսի 2002թ. թիվ 1146-Ն որոշում /հավելված թիվ 2/:

-Մարզպետի համապատասխան գրություններով համայնքի ղեկավարին ներկայացվել են համայնքի ավագանու 2009-2011թթ. որոշումների վերաբերյալ դիտողություններ և առաջարկվել է նշված որոշումներում արձանագրված թերությունները և բացթողումները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին /<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-45-րդ հոդվածների/, որոնք կատարվել են:

2) Համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին ուղարկում եւ համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցնում.

+ Համայնքի ղեկավարը անհատական իրավական ակտ ընդունելուց հետո երկօրյա ժամկետում ուղարկում է ավագանուն, որոնք փակցվում են համայնքի ավագանու նստավայրում բոլորի համար տեսանելի վայրում: Ուսումնասիրման ժամանակ փակցված էր վերջին երկու անհատական իրավական ակտերը:

3) Համայնքի զարգացման քառամյա ծրագրի՝ ավագանու հաստատմանը ներկայացում.

- Համայնքի ղեկավարը համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը ավագանու հաստատմանն է ներկայացրել 01.12.2008թ.' օրենքով սահմանված ժամկետում: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 53-րդ հոդված: /

4) աշխատակազմի (այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների), ինչպես նաև բյուջետային հիմնարկների եւ ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների հաստատում:

- Համայնքի ղեկավարը 25.12.2008թ. թիվ 187 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը, օրենսդրությամբ նախատեսված՝ կապված համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի, խնամակալության և հոգաբարձության հետ, վերջին փոփոխությունները կատարվել են 29.09.2011թ. թիվ 242 որոշմամբ (առանձնացված ստորաբաժանում չունեն):

5) Աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերի եւ դրանցում առաջարկվող փոփոխությունների՝ ավագանու հաստատմանը՝ ներկայացում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված դեպքում:

- Համայնքը համապատասխան ստորաբաժանում և բյուջետային հիմնարկներ չունի:

+ Համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը:

6) Աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերի եւ դրանցում առաջարկվող փոփոխությունների ավագանու հաստատմանը ներկայացում:

- Աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ավագանու հաստատմանը ներկայացվել են սահմանված կարգով /բյուջետային հիմնարկներ չկան/:

7) Համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների եւ ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագծի՝ ավագանու հաստատմանը ներկայացում:

Համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշման նախագիծ չի ներկայացվել՝ այդպիսիք չլինելու պատճառով:

8) համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհուրդների եւ վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերի՝ ավագանու հաստատմանը ներկայացում:

+ Համայնքային ենթակայության առևտրային կազմակերպություններ համայնքում չեն գործում:

9) Համայնքի ղեկավարի տեղակալի, աշխատակազմի քարտուղարի, կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում եւ ազատում:

- Համայնքի ղեկավարի տեղակալի, աշխատակազմի քարտուղարի՝ ստուգվող շամանակահատվածում, նշանակումներ և ազատումներ չեն կատարվել, /կառուցվածք և առանձնացված ստորաբաժանումներ չունեն/:

10) Համայնքի բյուջետային հիմնարկների ղեկավարների՝ համայնքի ավագանու որոշմամբ նշանակում եւ ազատում:

- Համայնքը բյուջետային հիմնարկներ չունի:

11) Տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագծի համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում:

- Տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

12) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրերի կնքում, համայնքի ավագանու վավերացմանը դրանց ներկայացում: Միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու եւ դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերի՝ ավագանու հաստատմանը ներկայացում:

+ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել, միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել, ինչպես նաև համայնքների հիմնադրած միությունների անդամակցելու և դրանց

անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

13) Համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին առաջարկության ներկայացում.

* 11.07.2009թ-ի համայնքի ավագանու N 39 որոշմամբ Բալահովիտ համայնքի N 61 հանրակացարանի թվով 6 բնակարան օտարվել է, որից 3 բնակարանը ուղղակի վաճառք եղանակով:

2009թ-ի նոյեմբերի 13-ին համայնքի ավագանու N 78.79 որոշումներով օտարվել է 2 բնակարան:

-2009-2012թթ. ընկած ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ավագանուն ներկայացվող 29 առաջարկություն համայնքի հողերի օտարման վերաբերյալ, որը ընդունվել է ավագանու կողմից:

14) Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու հաստատմանը առաջարկի ներկայացում.

- Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու հաստատմանը առաջարկ չի ներկայացվել: Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում չի շնորհվել:

15) Համայնքի անվանման եւ վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային եւ այլ հիմնարկները եւ կազմակերպությունները համայնքի ավագանու հաստատմանն ներկայացում եւ օրենքով սահմանված կարգով գրանցման ներկայացում (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).

-Նման առաջարկություններ ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

16) Շենքերի եւ շինությունների համարակալման սահմանում.

** ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում 2007թ-ին շենքերը, շինությունները համարակալվել են և տրվել են հասցեներ:

17) Իր իրավասության շրջանակում որոշումների ընդունում, արձանագրությունների կազմում եւ կարգադրությունների արձակում.

+ Ուսումնասիրվող ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 2009 թ.՝ 202, 2010 թ.՝ 247, 2011 թ.՝ 301, 2012 թ.՝ 38 որոշումներ, համապատասխանաբար 74, 75, 86, 35 կարգադրություններ: Աշխատակազմի քարտուղարի կողմից տրվել է համապատասխանաբար 2, 24, 13 հրամաններ:

Համայնքի համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերում արձանագրվել են մի շարք խախտումներ, թերություններ և բացթողումներ:

Համայնքի ղեկավարի 01.06.2009 թ. N 11 կարգադրության վերնագիրը գրվել է փոքրատառերով, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի «Իրավական ակտի վերնագիրը գրվում է մեծատառերով»: Նույնը կրկնվել է NN 2-31 կարգադրություններում:

10.06.2009 թ. N 32 կարգադրությունը նորմատիվ հիմնավորում չունի, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի, անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում: Նույնը կրկնվել է 2010թ. N 211 որոշման մեջ:

01.07.2009 թ. N 91 որոշման մեջ սխալ է գրառվել նորմատիվ իրավական ակտի (օրենքի) կրճատ անվանումը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերը»: Նույնը կրկնվել է NN 92-97, 100 որոշումներում:

03.07.2009 թ. N 95 որոշման նախաբանում չի պահպանվել իրավական ակտի «մաս», «կետ» հարաբերակցությունը, խախտվել է «Իրավական ակտերի մասին Հայաստանի

Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի «Օրենքի հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի»: Նույնը կրկնվել է NN 97, 100, 101, 111, 111/1, 114, 115 որոշումներում:

15.02.2011 թ. N 28 որոշման մեջ սխալ է գրառվել իրավական ակտերում հիշատակվող ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը, համաձայն որի «Իրավական ակտերում կիրառվող ամսաթվերում տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը տառերով»: Նույնը կրկնվել է N 99 որոշման մեջ:

18) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն եւ սեփական պատասխանատվությամբ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կազմակերպում եւ ղեկավարում.

+Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, պետության պատվիրակված լիազորությունների իրականացման հետ կապված, համայնքում կազմակերպվել է անասնաբույժի մեկ միավոր հաստիքի աշխատանքների իրականացում:

20) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական եւ այլ կադաստրների վարում.

**Քաղաքաշինական կադաստր համայնքը չի վարում,

21) Օրենքով կամ կառավարության սահմանած կարգով քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային եւ կարանտինային միջոցառումների, ինչպես նաեւ տեխնոլոգիական եւ տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետեւանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար միջոցների ձեռնարկում.

- Քաղաքացիական պաշտպանության 2012թ. պլանը մշակվել է օրինակելի ձևին համապատասխան, ներկայացվել է մարզային փրկարարական վարչություն համաձայնեցման համար:

22) Համայնքի բնակիչների հաշվառման կազմակերպում.

- Կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում. 2009թ.' 3334 մարդ, 2010թ.' 3481 մարդ, 2011թ.' 3853 մարդ, 2012թ.' 3448 մարդ:

23) համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաեւ դատարանում ներկայացում.

+Համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում պաշտպանելու անհրաժեշտություն չի եղել:

24) 3000-ից ավել բնակիչ ունեցող համայնքներում քաղաքացիների ընդունելության կատարում, օրենքով սահմանված կարգով քաղաքացիների առաջարկությունների, դիմումների եւ բողոքների քննության առում եւ միջոցների ձեռնարկում.

- Համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը սահմանված են, գրանցումների մատյանը վարվում է սահմանված կարգով:

+Գյուղապետարանում վարվում են դիմումների և գրությունների մուտքի և գրությունների ելքի մատյաններ: 2009 թ. գյուղապետարանի աշխատակազմում մուտք են եղել 223, 2010 թ.' 239, 2011 թ.' 290, 2012 թ.' 131 դիմումներ: 2009 թ. մուտք են եղել 186, 2010 թ.' 182, 2011 թ.' 190, 2012 թ.' 75 գրություններ, համապատասխանաբար ելք են եղել 296, 319, 386, 154 գրություններ: Մուտք եղած բոլոր դիմումներն ու գրությունները սահմանված կարգով գրանցված են դիմումների մուտքի և գրությունների մուտքի մատյաններում, իսկ ելք եղած գրությունները՝ գրությունների ելքի մատյաններում, որոնք սահմանված կարգով էջակալված, թելակարված և կնքված են, իսկ գրանցումներից երևում է ամբողջ շարժը:

25)Խնամակալության, հոգաբարձության սահմանում, խնամակալության եւ հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորությունների իրականացում.

+Համայնքի ավագանու 5.05.2010 թ. N 17 որոշմամբ հաստատվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմ 5 անդամից քաղկացած: Հանձնաժողովը 2009, 2010, 2012 թվականներին նիստ չի գումարել: 2011 թ. գումարվել է 2 նիստ՝ մեկական հարցով, 1.06.2011 թ. N 162 և 17.10.2011 թ. N 259 որոշումներով ճանաչվել են խնամակալներ:

26) իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու եւ այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն:

+Համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքեր չեն արձանագրվել, հետևաբար ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն չի տրվել:

27) օրենքով սահմանված կարգով համայնքի զինապարտների գրանցամատյանի վարում, նրանց վերաբերյալ ցուցակների, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու եւ աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալների ներկայացում տարածքային զինվորական կոմիսարիատ:

-Համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանները վարվում են /կատարվում է նաև էլեկտրոնային տարբերակներով/: /ՏԻՄ հ36/:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրության հաստատում օրենքով սահմանված կարգով:

- Համայնքի ղեկավարը 25.12.2008թ. թիվ 187 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը, օրենսդրությամբ նախատեսված՝ կապված համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի, խնամակալության և հոգաբարձության հետ, վերջին փոփոխությունները կատարվել 29.09.2011թ. թիվ 242 որոշմամբ:

2.Համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանների վարում, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

-Համայնքի ղեկավարի, ավագանու և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանները վարվում են համաձայն սահմանված կարգի:

3.Կադրային գործի վարման նկատմամբ վերահսկման շրջանակներում ուսումնասիրության ենթարկված բոլոր իրավական ակտերի համադրում իրավական ակտերի հաշվառման մատյանների գրառումների հետ:

- Համայնքի ղեկավարի, ավագանու և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերը համապատասխանում են իրավական ակտերի հաշվառման մատյանների գրառումների հետ:

4.Օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքի հաստատում (կառուցվածքը անհրաժեշտ է հաստատել, եթե աշխատակազմն ունի ստորաբաժանում (բաժին)):

- Գյուղապետարանի աշխատակազմն ստորաբաժանում չունի (բաժին):

5.Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակի համապատասխանությունը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին, ինչպես նաև պաշտոնային դրույքաչափերի համապատասխանությունը «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

-Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու 26.03.2010թ. N 14, 20.12.2010թ. N 55/փոփոխ./, 13.12.2011թ. N 52, 20.03.2012թ. N 10 /փոփոխ./ որոշումներով:

Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը /վերջնական փոփոխություններով/ համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանով հաստատված՝ Բալախովիտի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին /N 11 հավելված/: Համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

6.Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատման (փոփոխման) ընթացքը, այդ թվում՝ անվանացանկից հանված պաշտոնների անձնագրերը ուժը կորցրած ճանաչելն ու անվանացանկում ավելացված նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը, ինչպես նաև վերջնական պաշտոնների անձնագրերի բովանդակության համադրումը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջների հետ:

-Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի 15.01.2007թ. NN 130-134 որոշումներով /փոփոխությունները՝ 02.06.2009թ. թիվ 81 որոշում/, համաձայն հավելվածների:

-Համայնքի ղեկավարի 05.04.2012թ. թիվ 47 որոշմամբ /1-5 հավելվածներում/, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում կատարվել են ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի մարտի 16-ի N 43-Ա հրամանից բխող փոփոխությունները, վերջնական պաշտոնների անձնագրերի բովանդակությունները հիմնականում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:

7.Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգով համայնքային ծառայողների անձնական գործերի վարում.

- Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերում կան թերություններ և բացթողումներ:

-Համայնքային ծառայողների անձնական թերթիկներն ու ինքնակենսագրությունները չեն համապատասխանում կարգի 7-րդ կետի <<դ>> և <<զ>> ենթակետերի պահանջներին, անձնական գործերի էջերը համարակալված չեն, վերգիրները լրացված են թերի:

-Բացակայում են նոր լրացված անձնական թերթիկները, համայնքային ծառայողի կողմից իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալու մասին վկայող փաստաթղթերը:

-Որոշ փաստաթղթերը չեն պահվում ժամանակագրական կարգով:

Կարգավորման համար ներկայացվել է մանրամասը խորհրդատվություն /սկսված թերությունների մի մասը տեղում կարգավորվել են/:

8.Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմի հաստատում, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից հանձնաժողովի կազմում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների քանակական և անհատական կազմի հաստատում ու 20-օրյա ժամկետում՝ հանձնաժողովի աշխատակարգային նիստի հրավիրում և հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրություն (հանձնաժողովի աշխատակարգային նիստի արձանագրություն).

-Ավագանու 22.04.2009թ. թիվ 6/4 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկված ավագանու անդամների քանակային և անհատական կազմերը /3 անդամ/ /<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքում փոփոխությունները ուժի մեջ են մտել՝ 06.12.2008թ./:

-Մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախագահը /համայնքի ղեկավարը/ 23.04.2009թ. թիվ 59 որոշմամբ հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը/փոփոխություն է կատարել նախորդ հանձն. կազմում՝ 07.03.2007թ. թիվ 147 որոշման մեջ/: Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության, կայացել է նույն օրը՝ 23.04.2009թ.:

9.Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերի հաստատում.

-Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարը 16.10.2007թ. թիվ 242 որոշումով հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը /հավելված 1, 2/:

-Պետք է նշել, որ համայնքային ծառայության մասին օրենսդրության փոփոխությունից հետո, մինչ օրս, աշխատակազմում չեն հաստատվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նոր աշխատակարգերը:

Այս առումով՝ անհրաժեշտ է սեղմ ժամկետում, օրենքով սահմանված կարգով, հաստատել Բալահովիտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային

ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նոր աշխատակարգերը և ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 16.10.2007թ. թիվ 242 որոշումը:

10. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի հաստատում և դրա պատշաճ իրագրելում համայնքի ղեկավարի աշխատակազմի բոլոր աշխատակիցներին.

-«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Այս առումով՝ համայնքների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգը հաստատվել է ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանով /փոփոխ.՝ 09.08.2010թ. թիվ 08-Ն հր./, իսկ Բալահովտի գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը մինչ օրս հաստատված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է, հնարավոր սեղմ ժամկետում, ձեռնարկել միջոցներ Բալահովտի գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, համապատասխան փոփոխություններով, հաստատելու և այն աշխատակազմի աշխատակիցներին պատշաճ իրագրելումն ապահովելու ուղղությամբ: /Փոփոխությունները՝ մարզպետի 26.08.2010ջթ. N 01/15.1/2576-10 գրությամբ ուղարկվել է գյուղապետարան/:

11. Օրենքով սահմանված կարգով մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյանի, վերապատրաստման հաշվառման մատյանի, ինչպես նաև անձնական գործերի հաշվառման մատյանի վարում.

-Համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվում են համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գրանցամատյանները: Մատյանները համարակալված, թելակարված և կնքված են:

12. Համայնքներից Հայաստանի Հանրապետության մարզպետարան ներկայացված գրանցամատյանային տվյալների (Ձև NN 1, 2) արժանահավատության փաստացի ուսումնասիրություն.

- Աշխատակազմի համայնքային ծառայողների գրանցամատյանում (Ձև N 1) տվյալները հիմնականում համապատասխանում են մարզպետարան ներկայացված տվյալներին, կան որոշակի անճշտություններ կապված աշխատանքային ստաժի հաշվարկի հետ և գլխավոր մասնագետ-աուդիտոր /2.3-2/ համայնքային ծառայության պաշտոնի անվանման <աուդիտոր> բառը ավելորդ է, այն չի համապատասխանում համայնքային ծառայության անվանացանկին:

13. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրություն.

- Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրությունից պարզվեց, որ մրցույթները և ատեստավորումները հիմնականում անցկացվել են սահմանված կարգերին համապատասխան:

14. Զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանի վարում.

-Համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանները վարվում են /նաև էլեկտրոնային տարբերակով/: /ՏԻՄ հ36/:


15. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից հայտնաբերած թերությունների մասին զեկուցագրերի համադրում թերությունները վերացած լինելու մասին համայնքների ղեկավարների ներկայացրած տեղեկատվության և փաստացի իրավիճակի հետ:

-Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմված զեկուցագրերում նշված թերությունները հիմնականում կարգավորվել են:

ԱՇԽԱՏԱՆ-ՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՆԴԱՄՆԵՐ՝



Ս. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Ռ. ԹՈՒՄՈՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ե. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա. ՎԻՐԱԲՅԱՆ

ԲԱՆԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Շանթաբացարձակ աշխատանքի, աշխատանքի ժամկետային
բացարձակ աշխատանքի, և առաջնությունների համար:


/ ստորագրություն /


/ անուն, ընդգանուն /

02 06 2012 թ.